ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լ. Դ. ԴԱՆԵՂՅԱՆ

ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Իրանի պատմության Սեֆյան տիրապետության շրջանի (1502—1722) վերաբերյալ կան ստվար քանակությամբ բազմալեզու աղբյուրներ։ Նրանց մի մասը գիտական լայն ճանաչում է ստացել և մեծ չափով օգտագործվել Իրանի պատմության տարբեր բնագավառների ուսումնասիրության համար։ Աղբյուրների մեծ մասը, սակայն, սպասում է իր հետազոտողներին։ Նշված հարյուրամյակների պատմությունը շարունակաբար եղել է պատմաբանների հետազոտության առարկա, այսուհանդերձ, իր շատ կողմերով, մասնավորապես խնդրո առարկա հարցերում այն դեռևս կարոտ է գիտական լուսաբանության։

Իրանի XVII դ. առաջին կեսի պատմության վերաբերյալ մեզ հասած պարսկալեզու աղբյուրներից առավել կարևոր են Շահ Աբաս Ա-ի պալատական պատմիչ Իսքանդար բեկ Թորքեմանի (Մունշի) ստվարածավալ երկը[1] և նրա «Շարունակությունը»[2], Մոհամմեդ Թահեր Վահիդի «Աբբաս-Նամեն»[3], Սեֆյան Իրանի վարչական սիստեմի վերաբերյալ չափազանց արժեքավոր՝ «Թազքիրաթ-ուլ-մուլուքը»[4] և այլն։ Թեև միջնադարյան պարսից պալատական պատ-

---

[1] «Արրասյան աշխարհարար պատմություն» اسکندر بیك ترکمان (منشی) تاریخ عالم آرای عباسی، تهران، ج ۲-۱، ۱۳۳۴-۱۳۳۵

[2] ذیل تاریخ عالم آرای عباسی (تألیف اسکندر بیك ترکمان و محمد یوسف) تهران، ۱۳۱۸

[3] محمد طاهر وحید، عباسنامه یا شرح زندگانی ۲۲ ساله شاه‌عباس ثانی (۱۰۵۲-۱۰۲۳) بتصحیح و تحمیه ابراهیم دهگان، اراك، ۱۳۲۹

[4] Tadhkirat al-muluk, a manual of Safavid administration by prof. V. Minorsky, G., M., S., Cambridge, 1943.

մագրությանը բնորոշ է ներբողագրությունը. և պարսկալեզու պատմական երկերի հեղինակների մեծ մասը, լինելով այդ պատմագրության ներկայացուցիչներ, պատմությունը շարադրում էին՝ առանձին հարցերի միտումնավոր մեկնաբանությամբ, սակայն, այդ երկերը հսկայական փաստական նյութ են պարունակում և քննական հետազոտության դեպքում արժեքավոր ավանդ կարող են մուծել Իրանի պատմության ուսումնասիրության գործում։ Ավելացնենք, որ թեև այդ գործերի մեծ մասը պատերազմների ու արշավանքների պատմություն է, այնուհանդերձ, նրանք ընդգրկում են բավականին նյութ նաև սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ։

Իրանի պատմության ուսումնասիրության համար մեծ է նաև հայկական աղբյուրների նշանակությունը։ Այդ մասին նշում են մասնավորապես պարսիկ պատմաբանները։ Սակայն Իրանի մասին հայկական աղբյուրների հետազոտումը դեռևս չափազանց թույլ է տարվում (եթե չասենք՝ իսպառ բացակայում է)։ Առանձնապես նկատելի է XVII դ. այնպիսի արժեքավոր սկզբնաղբյուրի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որպիսին Առաքել Դավրիժեցու «Պատմությունն» է[5]։

Նվիրված լինելով Հայաստանի պատմությանը, այն հարուստ նյութ է բովանդակում նաև մի շարք այլ երկրների, մասնավորապես Իրանի պատմության վերաբերյալ։ Պատահական չէ, որ որոշ ձեռագրերում այս երկը անվանվում է «Պատմութիւն թագաւորացն Պարսից...»[6]։ XVII դ. սկզբի իրանա-թուրքական պատերազմների, ինչպես նաև իրանահայ գաղութի կյանքի նկարագրությունից զատ։ Դավրիժեցու երկում տեղեկություններ են հաղորդվում Իրանի ներքին, սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ։ Կարևոր տվյալներ կան երկրի քաղաքների, արհեստների, պալատի, վարչակարգի, հարկերի և հարակից այլ հարցերի վերաբերյալ։

«Պատմությունը» ոչ միայն ընդգրկում է լրացուցիչ փաստեր, այլև օգնում է ճիշտ լուսաբանելու մի շարք հարցեր՝ սեֆյան արտաքին քաղաքական կյանքի, հայ-իրանական հարաբերությունների, երկրի ներքին կյանքի վերաբերյալ և այլն։

Դավրիժեցին իր ժամանակի ուսյալ և ակնառու անձնավորու-

---

5 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896։ (այսուհետև՝ Դավրիժեցի)։ Երկն ունեցել է ևս երկու հրատարակություն՝ 1669 թ. (Ամստերդամում) և 1884 թ. (էջմիածնում)։

6 Տե՛ս օր.՝ Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2271, էջ 214։

թյուններից էր։ Նա իր նկարագրած դեպքերի մեծ մասի ժամանակակիցն ու ականատեսն է եղել։ Իր պատմության հավաստիությունը շեշտելու մտահոգությամբ պատմիչը հաճախ ընդգծում է՝ «տեսար աչօք մերովք» և կամ «...պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել...»[7]։ Դեպքերի մի մասն էլ Դավրիժեցին շարադրել է ըստ ականատեսների պատմածների։ Ըստ որում, հեղինակը դրանք ըբի է առել իր երկի համար նյութ հավաքելու նպատակով կատարած շրջագայությունների ժամանակ։ Շատ երկրների թվում նա եղել է և Իրանում։ «Պատմության» մեջ հաճախակի են այսպիսի հավաստիացումները. «...զոր տեսողքն պատմեցին ինձ», «զոր ինչ լուաք յականատես պատմողաց՝ զայն գրեմք...»։ Դավրիժեցին օգտագործել է և գրավոր աղբյուրներ՝ ավետարանների, ճաշոցների, հայամավուրքների հիշատակարաններ, կոնդակներ, պատմական երկեր և այլն։ «Այլ և յամենայն եկեղեցիս՝ ուր և պատահեցաք,—գրում է հեղինակը,—զ·մենայն գրոց անդրէն եղելոց գլիշատակարանսն ընթեռնուաք»[8]։ Իրանին վերաբերող տեղեկությունների մեծ մասը պատմիչը գրել է կամ ականատեսների հաղորդումների և կամ անձնական հիշողությունների հիման վրա։ Երբեմն օգտագործել է նաև գրավոր աղբյուրներ, մասնավորապես Սոյահտնում, Թավրիզում, Չհարմհալի Վաստիկան գյուղում գտնվող հիշատակարաններ։ Անհրաժեշտ է ընդգծել այն մեծ պատասխանատվությունը և քննադատական մոտեցումը, որ ցուցաբերում է Դավրիժեցին իր երկի աղբյուրների նկատմամբ, լինեն դրանք գրավոր, թե ականատեսների պատմածներ։ Պատմիչը ձգտել է հաղորդել առավելագույն չափով ստույգ տվյալներ և դրա համար, իր խոսքերով ասած՝ «վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զի զմի պատմութիւն, տասն անդամ և այլ աւելի կրկնելով գրեցի»[9]։

Պատահական չէ, որ «Պատմությունը» համարվել է «հազվագյուտ ստեղծագործություն» (Նոյման, Մյուլլեր)[10]։ Ղ. Ալիշանը նշում է, որ Դավրիժեցին թե՛ իրենից 2—3 դար առաջ և թե՛ իրենից հետո եղած պատմիչների միջ լավագույնն է[11]։ Դավրիժեցին

---

[7] Դավրիժեցի, էջ 409, 213 և այլն։

[8] Նույն տեղում, էջ 416։

[9] Նույն տեղում, էջ 670։

[10] Տես՝ Neuman C. F., Versuch einer Geschichte der armenischen literatur, Leipzig, 1836, s. 249; Müller Fr., Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Bd. II, 1888. s. 259—262.

[11] Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 131։

«ստուգապատում մատենագիր է և իր ժամանակի պատմության համար վստահելի աղբյուր»[12], «առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակակիցների մեջ»[13]։

Մեծ է եղել «Պատմության» նվաճած ուշադրությունը[14] սկսած առաջին հրատարակությունից, երբ Ամստերդամից գրքի օրինակներն ուղարկվում են Արևելք և շուտով սպառվում։ Նույնը կատարվում է հաջորդ հրատարակությունից հետո։ Ֆ. Մյուլլերը գրում է, որ ինքը մեծ դժվարությամբ մի հայ եկեղեցականի օգնությամբ բավականին մեծ գնով կարողացել է ձեռք բերել Դավրիժեցու գրքի մի օրինակը[15]։ Նույնպիսի հոգնություն է կրել և Պետերմանն իր՝ դեպի Արևելք կատարած ուղևորության ժամանակ, մինչև որ Ջուղայում գտել է «Պատմության» մի օրինակը՝ Բեռլինի պետական մատենադարանի համար[16]։

«Պատմության» ճանաչվածությունը արդյունք է ոչ միայն այն բանի, որ նրա հեղինակը ականատես է, ականջալուր և անաչառ, այլև՝ որ նա տեղեկացնում է Հայաստանից բացի նաև այլ երկրների մասին, հաղորդելով այնպիսի տվյալներ, որոնք բացակայում են նույն դարաշրջանի այլ պատմիչների երկերում։

Նման սկզբնաղբյուրի հետազոտումը և օգտագործումը Իրանի պատմության ուսումնասիրության համար ոչ միայն շահեկան է, այլև միանգամայն անհրաժեշտ։

* * *

XVII դ. առաջին կեսը, որն արտացոլվել է Դավրիժեցու երկում, աչքի է ընկնում Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի առավել աշխուժացմամբ։ Այդ շրջանի համար բնորոշ են պետական հողերի նշանակալից աճը, կենտրոնածիգ քաղաքականության ուժեղացումը, առևտրական ու դիվանագիտական կապերի ընդլայնումը, քաղաքների, արհեստների, ներքին առևտրի զարգացումը և այլն։

---

12 Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 1144։

13 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1956, էջ 363։

14 Այն չէր կարող վրիպել հայ պատմագիրների երկերի թարգմանության գործի անխոնջ մշակ, Պետերբուրգի կայսերական ճեմարանի գործունյա անդամ Մ. Բրոսսեի ուշադրությունից, որը ֆրանսերեն է թարգմանում «Պատմությունը» և 1874 թ. հրատարակում (Brosset M., Livre d'Histoires composé par le vartabiet Arakel de Tauriz (Collection d'historiens arméniens, t. I, St.-Petersbourg, 1874).

15 Müller Fr., Wiener Zeitschrift..., s. 259.

16 Petermann H., Reisen im Orient, Bd. I, Leipzig, 1860, s. 223.

Հողագործությունը մնում էր որպես տնտեսության գերիշխող ձև։ Գյուղատնտեսության զարկերակը արհեստական ոռոգումն էր։ Ֆեոդալական հողային սեփականության զարգացումը ուղեկցվում էր արտադրողական ուժերի հարաբերական զարգացմամբ և դրան հետևող ֆեոդալական շահագործման ուժեղացմամբ։

Սեֆյան Իրանում ֆեոդալական հարաբերությունները զուգակցվում էին քոչվոր բնակչության մեջ իշխող նահապետական-տոհմատիրական հարաբերությունների հետ։ Բնակչության 1/3-ը քոչվոր կյանք էր վարում, ընդ որում քոչվոր ցեղերը տիրում էին մեծ քանակությամբ հողերի, արոտավայրերի։

Մեծ տարածում ունեին պայմանական ծառայության հետ կապված հողային սեփականության ձևերը։ Դիվանի կամ խասսե հողային ֆոնդերից մեծ բաժին տրվում էր ֆեոդալներին որպես ալատ (թիուլ, սոյուրղալ)։ Ալատային նվիրատվություններից գլխավոր տեղ էր դրավում թիուլը, որը, ի տարբերություն սոյուրղալի, ժառանգական չէր։ Գոյություն ուներ թիուլի երկու տարատեսակ. այն տրվում էր կամ պաշտոնի աութիվ՝ պտշտոնավարելու ընթացքում, կամ էլ անձնական արժանիքների համար՝ ցմահ, սակայն առանց հարկային ու դատավարական իմունիտետի իրավունքի։

Դավրիժեցու մոտ հանդիպում ենք հողային նվիրատվության վերաբերյալ հետաքրքիր փաստ։ Դավիթ կաթողիկոսը, հրաժարվելով կաթողիկոսությունից, մեկնում է Սպահան, դրա համար խնդրելով Շահ-Աբաս Ա-ի թույլտվությունը և հրամանը։ Շահը թույլտվության հետ մեկտեղ նրան նվիրում է մի գյուղ (Ջղախոռ գավառում), «որի կերիսցէ զմուտս գեղջն այնմիկ և ազօթեսցէ վասն կենաց թագաւորին»[18]։ Ամենայն հավանականությամբ այստեղ գործ ունենք թիուլի մի տարբերակի հետ, քանի որ այս նվիրատվության հիմքում ընկած է թիուլին հատուկ պայման, այսինքն՝ հողային հարկի կամ նրա մի մասի (և ոչ՝ հողի ու նրա բնակիչների) պարգևումը։ Ըստ որում թիուլը տրված է ոչ թե զինվորական կամ քաղաքացիական պաշտոնյայի՝ ծառայության համար (ինչպես ընդունված էր), այլ՝ այլակրոն բարձրաստիճան հոգևորականի։

---

[17] Սեֆյան Իրանի հողատիրության սիստեմի մասին տե՛ս Н. Пигулевская и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л., 1958; باستانی پاریزی، جزر و مد سیاست و اقتصاد در امپراطوری صفویه (.دنعما، ۱۳۴۵، شمارهٔ ۱۰، ۶ այլն։

[18] Դավրիժեցի, էջ 217։

Մյուս կողմից, այդ նվիրատվությունը կատարվել է հարկային իմունիտետի շնորհմամբ[19], մի երևույթ, որ հատուկ է եղել սոյուրղալին։

Այսպիսով, հիշյալ փաստը դիտվում է իբրև հողային այնգիսի նվիրատվություն, որին բնորոշ են ինչպես թիուլին, այնպես էլ սոյուրղալին հատուկ գծեր։ Դա վկայում է Սեֆյան շրջանում հողային նվիրատվության զանազան տարբերակների ստեղծության մասին և գալիս է հավաստելու Ի. Պ. Պետրուշևսկու այն միտքը, որ «թիուլը, որպես տերիտորիա, որից շնորհվում էր ռենտա-հարկի մի մասը, կարող էր շատ տարբեր հասկացություններ արտահայտել»[20]։

Հողային նվիրատվության մի այլ ձևի մասին է վկայում Դավրիժեցու հաղորդումը Շահ Աբաս Ա-ի՝ Մելիք Շահնազարին և նրա եղբայրներին պարգևած գյուղերի մասին։ Այդ նվիրատվությունն արդեն ժառանգական պայմանով է՝ «...զի անփոփոխ լիցի ժառանգութիւն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան»[21]։ Ժառանգական իրավունքը, ինչպես հայտնի է, հատկանշական է սոյուրղալին. սակայն տվյալ դեպքում դժվար է խոսել սոյուրղալի մասին, քանի որ հիշյալ նվիրատվության վերաբերյալ այլ պայմաններ հայտնի չեն։

Սեֆևիների օրոք գյուղացիների դրության հարցը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ։ Հայտնի է, սակայն, որ ռայաթի վրա դրված էին մեծ թվով հարկեր ու պարտավորություններ, որոնք նա հաճախ ի վիճակի չէր լինում վճարել։

Ռենտայի հիմքը կազմում էր մալոչհաթը (խարաջ, բահրե), որը տարբեր ժամանակներում և տարբեր նահանգներում կազմում էր բերքի 1/6-ից մինչև 1/3 մասը։ Գոյություն ունեցող բազմաթիվ այլ հարկերից ու պարհարկներից էին՝ ավարիզ, ուլաղ և ուլամ, բիդար, ջիղյա, թաուջիհ, շեքար, մոհլաթանե, ղոնալղա և այլն[22]։

---

19 Նույն տեղում, էջ 232—233։

20 *И. Петрушевский.* Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—нач. XIX вв., Л., 1949, стр. 210.

21 Դավրիժեցի, էջ 96—97։

22 Այս և մյուս հարկերի մասին տե՛ս مینورسکی، سازمان اداری حکومت صفوی، ترجمه مسعود رجب نیا، تهران، ۱۳۳۴، ص ۱۹۴—۱۱۷، احمد تاج بخش، ایران در زمان صفویه، تبریز، ۱۳۴۰، ص ۳۸۹—۳۸۱ *Н. Пигулевская* и др., История Ирана..., стр. 256; *И. Петрушевский*, Очерки..., стр. 266—292; *А. Папазян*. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972. гл. VIII. Վերջին երկու աղբյուրների մեջ թեև խոսքը Ադրբեջանի և Հայաստանի մասին է, սակայն նրանցում բերված հարկերի հարուստ ցանկը և բացատրությունները կարող են պատկերացում տալ և Իրանի հարկային սիստեմի մասին։

Դավրիժեցու երկում թեև հատկապես չի խոսվում հարկերի մասին, սակայն առանձին տեղեկություններ հաստատում, երբեմն և լրացնում են Սեֆևիների օրոք բնակչությանը պարտադրված հարկերի, նրանց դանձման ձևերի, ինչպես նաև աշխատավորության վիճակի մասին եղած տվյալները։

Շահ Արաս Ա-ի ներքին քաղաքականության բնորոշ գծերից մեկը նրա ձգտումն էր՝ ապահովել երկրի կենտրոնական շրջանների, մասնավորապես Պարսկական Իրաքի բարգավաճումը։ Այդ գիծը շոշափելի էր Շահ Արասի նաև հարկային քաղաքականության մեջ[23] և դրա ցայտուն արտահայտություններից մեկը եղավ 1598/99 (հեջրի 1007) թ. Պարսկական Իրաքի բնակչության ազատումը մեծ թվով հարկերից, որոնց դումարը կազմում էր մոտ 100 հազար իրաքյան թուման[24]։

Դավրիժեցին մանրամասներ ունի այդ հարկերից՝ չոբանբեկիի մասին, որը դանձվում էր մանր եղջերավոր անասունների համար[25]։ Նրա հաղորդմամբ այս հարկը չափազանց ծանր էր և քայքայիչ ներգործություն է ունեցել բնակչության տնտեսական վիճակի վրա։ Պատմիչը նշում է, որ չոբանբեկիի կամ, ինչպես նա անվանում է՝ քոդավի ստույգ չափը գյուղացիներին հայտնի չէր[26], և հարկահանները դանձել են այն ըստ իրենց հայեցողության, տարևցտարի ավելացնելով։

Դավրիժեցու հաղորդմամբ Խոռոմարադ գյուղի բնակիչներից մեկն այսպես է նկարագրել քոդավի հետևանքները. «Որքան դնաց, ծանրացաւ քոդաւն, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն ոչխարորն զամենայն վաճառեալ տուաք ի քոդաւն, և այնու ոչ կարացաք զերծանիլ, զպարաս ևս առաք և տուաք քոդաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քոդաւն տուաք և զորս պարտատերացն վճարեցաք, ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քոդաւին»[27]։

---

[23] Տե՛ս այդ մասին Н. Миклухо-Маклай К вопросу о налоговой политике в Иране при шахе Аббасе I (1587—1629), («Советское востоковедение», 1949, VI).

[24] اسکندر منشی... ج ۱، ص ۵۱۷

[25] Մոնչու հաղորդման համաձայն չոբանբեկիից արքունի դանձարան էր մտնում տարեկան 20 հազար իրաքյան թուման (اسکندر منشی... ج ۱، ص ۵۸۷)

[26] Պաշտոնական ցուցակով ոչխարների դիմաց դանձվող դումարը պետք է հավասար լիներ ոչխարների և դառների ընդհանուր թվի 1/7 մասի և հղի ոչխարների 1/3 մասի արժեքին (احمد تاج‌بخش، ایران...، ص ۳۸۹)

[27] Դավրիժեցի, էջ 174։

Չորանբեկիի վերացումը Պարսկական Իրաքում[28], ինչպես ասվեց, ինքնին խոսում է նվաճված երկրների հաշվին Իրանի կենտրոնական շրջանների տնտեսության ամրապնդման և նրա բնակչության վիճակի բարելավման ուղղությամբ Շահ Աբասի հետևողական քաղաքականության մասին։ Այս հանգամանքը, սակայն, չի նկատվել Դավրիժեցու կողմից՝ չորանբեկիի վերացման հարցը մեկնաբանելիս, որը պատմիչը դիտում է իբրև շահի խղճահարության և ողորմածության արտահայտություն։ Այսուհանդերձ, Դավրիժեցու նկարագրությունն արժեքավոր է փաստական առումով և պատկերացում է տալիս ոչ միայն վերոհիշյալ հարկի, այլև ընդհանրապես ռայաթի կյանքի մասին։

Դավրիժեցու նկարագրած ընտանիքն իսպառ զրկվել էր իր երբեմնի ունեցվածքից (մեծ քանակությամբ անասուններ, այգի, ջրաղաց և այլն)։ Նույն վիճակում էին գյուղի մյուս ընտանիքները։ Նկարագրված վիճակն ընդհանուր էր նաև հարևան գյուղերում. «Եւ լայսմ պատճառէ չքաւորեցաք,—գանգատվում է Խոռոմաբադի գեղջկուհին,—ոչ միայն մեք զոր տեսանես, այլ և բաղում մեծատունք այսպէս եղեն, ոմանք ի մեր գեղջէս և այլք յայլոց գեղօրէից գաւառիս. որ և սկսավ պառաւն զայնոսիկ զամենեսեան յանուանէ յիշել»[29]։

Ռայաթի համար անձնապես ծանր էր մի ամբողջ շարք պարտավորությունների կատարումը՝ կապված շահի կամ բարձրաստիճան մարդկանց այցելությունների հետ։ Գյուղացիները պարտավոր էին ոչ միայն օթևան տալ նրանց, այլև հոգալ նրանց բոլոր կարիքները։ Այդպիսի պարհակներ էին ստվարին (اسواری)։ նղուլը (نزول), ղոնալղան (قنلغه)، ալաֆե-ուլուֆեն (علفه علوفه)، խեդմաթանեն (خدمتانه) և այլն։ Դավրիժեցու շատ տվյալներ վկայում են ռայաթների կողմից այդ պարտավորությունների կատարման մասին։

---

[28] Այլ նահանգներում, այդ թվում և նվաճված ծայրամասային շրջաններում չորանբեկին շարունակում էր մնալ իրեն դիտավոր հարկերից մեկը։ Դրա վկայությունն են նաև 1647 և 1649 թթ. Երևանի բեկլարբեկ Քեյխոսրովխանի հրամանագրերը Էշմիածնի վանքի այգիների և ջրաղացների մալոչհաթի և չորանբեկիի զումարները Փիլիպոս կաթողիկոսին նվիրելու մասին (ՄՊՀ, պր. 2, վավ. 34 և 36)։ Տե՛ս նաև Շահ Արաս Բ-ի օրոք 1651 թ. Քերմանում չորանբեկիի դանձման չափերի կարգավորման վերաբերյալ փաստաթղթերը باستانی پاریزی، جزر و مد سیاست و اقتصاد... («یغما»، ۱۳۴۵، شماره ۱۱، ص. ۵۹۱–۵۹۴) Սակայն ավելի ուշ հանդիպում ենք որոշ վայրերում գյուղացիներին չորանբեկիի վճարումից ազատելու դեպքերի (տե՛ս 1664/5 թ. Նահրեղաբրի բնակիչներին չորանբեկիի վճարումից ազատելու վերաբերյալ հրամանը («Грузино-персидские исторические документы», Тбилиси, 1955, стр. 309).

[29] Դավրիժեցի, էջ 175։

Այսպես, երբ Շահ Աբաս Ա-ն իր շքախմբով իջևանում է Խոռոմաբադ գյուղը, նրա բնակիչները «ընդ հարկահանաց իշխանացն հոգային զհոգս կարնայ արքայի և այլոց իշխանաց»[30]։ Դավրիժեցու հաղորդմամբ մի քանի գյուղացիներ կյանքով են հատուցում այն բանի համար, որ մերժել էին օթևան տալ ծպտված շրջող Շահ Աբբասին։ «Այլև առաքեաց զիշխանս ի գիւղն Խոռոմապատ. առ ի սպանանել զարսն, որք ոչ ընկալան զնա...»[31]։

Գոյություն ուներ և սուրսաթ (سورسات) կոչվող պարհակը, որը պարտավորեցնում էր գյուղացիներին պատերազմի ժամանակ հացահատիկ հասցնել բանակի զորամասերին։ Նկարագրելով 1603—1605 թթ. իրանա-թուրքական պատերազմների պատճառած ավերածությունները ու թշվառությունները, Դավրիժեցին նշում է նաև զանազան հարկերի, այդ թվում և սուրսաթի ծանրության մասին։ «Թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն,—գրում է պատմիչը,—և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրսաթն, որ զկնի զորացն բերել տային, և թէ զորքն և ի ձմեռն երիվարօքն իւրեանց ղշլաղ տային...»[32]։

Դավրիժեցին հիշատակում է նաև գլխահարկի (չիզյե) մասին, որը հեջրի I դ. սկսած (մ. թ. VII դ.) գանձվում էր ոչ մահմեդական բնակչությունից։ Լեոյի արտահայտությամբ՝ գլխահարկը «դաշնադրություն էր մուսուլմանի և անհավատի մեջ»[33]։

Սեֆևիների օրոք գլխահարկը, որ գանձվում էր քրիստոնյաներից և հրեաներից, մեծ չափերի էր հասել։ Ջնայած դրան, ինչպես վկայում են Դավրիժեցու տվյալները, Իրանի այլակրոն ժողովուրդները մշտապես գերադասել են գլխահարկ վճարել՝ հավատարիմ մնալով իրենց կրոնին[34]։

---

30 Նույն տեղում, էջ 172։

31 Նույն տեղում, էջ 176։

32 Նույն տեղում, էջ 78։

33 Լեո, Հայկական տպագրություն, հ. 1, Թիֆլիս, 1901, էջ 205։

34 Ուշադրավ է «Պատմության» մեջ հիշատակված վկայությունը Տարոնում 1306 թ. Ղարրանղա խանի արձակած հրովարտակի մասին, որով նրա իշխանությանը ենթակա քրիստոնյաներին աղղարարվում էր «... կամ դառնալ ի մոլար դաւանութիւն Մահմետի և կամ տալ խարաճ ամէն մարդ իւր գլխոյն զուրն դահեկան և թուք և ապտակ ի յերեսն և զմուրուն ճողել, և սև կարկատան մի ի վերայ աջոյ ուսին կարել, նախատինք վասն Քրիստոսի...»։ Շատ չանցած այս հրամանը փոխարինվում է նորով, ըստ որի՝ մահմեդականություն չընդունող քրիստոնյաներին «կամ զամենեսեան ներքինիս առնել կամ զմի ակն հանել» (տե՛ս Դավրիժեցի, էջ 625—626)։ Նույն վկայությունը դանում ենք Գրիգոր Վարագեցու ժամանակագրության մեջ (Մանր ժամանակագրություններ (կազմ. Վ. Հակոբյան), հ. 2, Երևան, 1956, էջ 361)։

Սեֆևիների կենտրոնական կառավարական մեքենան աչքի էր ընկնում իր բազմանդամությամբ։ Թեև շահը երկրի անսահմանափակ տիրակալն էր, սակայն պետության կառավարման մեջ խոշոր դեր ունեին մեծ թվով պալատական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց անվանում էին «պետության սյուներ.» (اركان دولت)։ Երկրի կառավարումը իրականացվում էր քաղաքացիական, ռազմական և հոգևոր իշխանությունների բազմաթիվ ներկայացուցիչների միջոցով։

Շահնշահից հետո երկրի առաջին դեմքը էթեմադ-էդ-դոուլեն[35] էր կամ մեծ վեզիրը (وزير اعظم)[36], որի վերահսկողությանն էին ենթակա պետության բոլոր վարչական ու ֆինանսական գործերը[37]։ Կըզըլբաշ էմիրների ազդեցության թուլացումից հետո մեծ վեզիրը նշանակալից կշիռ է ձեռք բերում, վճռական դիրք գրավելով պետության կառավարման գործում[38]։

Ըստ «Թազքիրաթ ուլ-մուլուքի»՝ մեծ վեզիրի իրավասության մեջ էին մտնում բարձր պաշտոնների նշանակումը, երկրի ֆինանսական ու հարկային գործերի կառավարումը, ինչպես նաև բոլոր բարձր աստիճանավորների գործունեության նկատմամբ վերահսկողությունը։

Դավրիժեցու երկը տեղեկություն է տալիս էթեմադ-էդ-դոուլեի գործունեության նաև այլ ոլորտների մասին, մոտիկից ցույց տալիս նրա անմիջական մասնակցությունը քաղաքային կյանքի զանազան հարցերի կարգավորման գործում։ Մեր պատմիչի նյութերը ցույց են տալիս, որ XVII դ. կեսերին ևս էթեմադ-էդ-դոուլեն հանդիսացել է շահի աջ թևը, նրա ամենաակտիվ գործակիցը։

Սպահանաբնակ այլակրոն ընտանիքների բնակատեղին փոխելու համար իշխանությունների գործադրած միջոցառումների մասին Դավրիժեցու նկարագրության մեջ ակնհայտ է էթեմադ-էդ-դոուլե Մահմատ բեկի (Մոհամմեդ բեկ) ակտիվ մասնակցությունը

---

35 Բառացի՝ «պետության վստահություն» (արար.)։

36 Ավելի ուշ նա սկսել է կոչվել առաջին վեզիր (نخست وزير)։

37 Սեֆևիների իշխանության սկզբնական շրջանում այս անվանումը գոյություն չի ունեցել, և իշխանության բարձրագույն պաշտոնյան կոչվել է «վաքիլ» (مینورسکی، سازمان اداری ... ص ۸۱۰) XVII դ. մեծ տարածում է գտնում «էթեմադ-էդ-դոուլե» անվանումը, որի մասին վկայում է և Դավրիժեցին։

38 Շարդենը նշում է նույնիսկ, որ Իրանի շահերը լոկ ձևական իշխանություն ունեն, և երկրի իսկական շահը մեծ վեզիրն է (Chardin, voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'orient, P., 1811, vol. V, p. 430. Դա, անշուշտ, չափազանցություն է և բնորոշ չէ մանավանդ շահարասյան շրջանի համար։

Շահ Աբաս Բ-ի հրամանների իրագործման ուղղությամբ տարվող բոլոր միջոցառումներին[39]։ Ընդ որում, մեծ վեզիրը գործում էր շահի հետ լիովին համաձայնեցված պլանով, հանձին թելադրելով նրան անհրաժեշտ որոշումը, մշտապես, սակայն, բարձրությունը վրա պահելով շահի հրամանը և գործելով միայն նրա անունից։

Էթեմադ-էդ-դոուլեն համագործակցում էր նաև իշխանավորների ու պալատականների հետ։ «Հոմախորհուրդ եղեալ ընդ այլ ես իշխանացն Պարսից», նա «անպատեհ և անձեռնտու» բնակավայր է ընտրում Սպահանից արտաքսվող հրեաների համար[40]։ Ըստ Դավրիժեցու տվյալների, մեծ վեզիրը նաև անմիջական շփման մեջ էր քաղաքապետի, վարչական զանազան պաշտոնյաների հետ. ընդհուպ մինչև Իրանի գաղթականների տարբեր խմբերի ներկայացուցիչները՝ ավագները. «...Կոչեաց Էհտիմալ-դօլվաթն առաջի իւր զաւազն երեանցւոց՝ որում անունն էր Խոջայ Յակոբջան, ընդ այլ ես ասրանց, և ծանոյց նոցա զհրաման թագաւորին»[41]։

Ինչպես պետության մյուս «սյուները», այնպես էլ Էթեմադ-էդ-դոուլեն իր գործունեության ընթացքում ուղեցույց ուներ շարիաթի սկզբունքները և այդ պատճառով ամենասերտ կապի մեջ էր հոգևոր գերագույն առաջնորդի՝ սադրի հետ։ Այս փաստը ցայտուն կերպով արտացոլված է Դավրիժեցու մոտ[42]։

Սադրը լինելով կրոնական առաջնորդ ու հոգևոր բարձրագույն ատյանի գլուխ, մեծ կշիռ ուներ պետության կառավարման մեջ։ Սեֆեիների օրոք սադրի պաշտոնը փոփոխությունների է ենթարկվում, և շահ Թահմասպի ժամանակներից սկսած այն վարում են երկու հոգևորական, որոնք կոչվում էին «սադրե-ամմա», «սադրե խասսա»[43]։ Վերջինս ավելի խոշոր դեր ուներ և օգտվում էր մեծ իրավունքներից։ Կրոնական աշխարհի բոլոր տեսակի գործերը, այդ թվում և հոգևոր ատյանը գլխավորելուց բացի, նա մասնակցում էր և քաղաքացիական դատարանի որոշ աշխատանքներին։ Այսպիսով, սադրի վճիռն անհրաժեշտ էր և գերագույն դատավորի՝ դիվանբեկիի համար, թեև վերջինիս կողմից վավերացվելուց հետո էր միայն, որ վճիռը գործադրման ուժ էր ստանում։

---

39 Դավրիժեցի, էջ 442—480։

40 Նույն տեղում, էջ 462։

41 Նույն տեղում, էջ 451։

42 Նույն տեղում, էջ 464։

43 مینورسکی، سازمان اداری... ص ۷۳–۷۴، اسکندر منشی، ج ۱، ص ۱۴۴
محمد طاهر وحید، عباسنامه، ص ۳۳۸

Դիվանբեկին ևս Սեֆևիների վարչական մարմինների շարքում վճռական դեր ուներ և կոչված էր գլխավորելու արդարադատության գործը։

«Թազքիրաթ-ուլ-մուլուքում» նշված՝ դիվանբեկիի պարտականությունները (ամբողջ երկրի մասշտաբով տուգանքների և գանգատների քննումը, շարիաթի սկզբունքների կիրառումը, շաբաթական երկու անգամ մարդկանց ընդունելությունը իր տանը դատական գործերով)[44] պատկերացում են տալիս դիվանբեկիի գործունեության մասին՝ կապված գլխավորապես մահմեդականների միջև վիճելի հարցերի կարգավորման հետ։

Դավրիժեցին տվյալներ է հաղորդում դիվանբեկիի կողմից Իրանի այլակրոն բնակիչների դատական հարցերի քննության մասին։ 1657 թ. մի սպանության առիթով հրեաների դատավարության նկարագրության մեջ դիվանբեկին ներկայանում է իբրև գլխավոր քննող և վճռող անձ, որի կայացրած մահվան վճիռը մահմեդականություն ընդունած հրեային (կամ որ միևնույնն է՝ մահմեդականին) սպանող երեք հրեաների նկատմամբ անհապաղ ի կատար է ածվում[45], իսկ մինչև դատավարությունը հանցագործներին գտնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս դիվանբեկին գործում էր էթեմադ-էդ-դոուլեի հետ միասին[46]։

«Պատմության» մեջ տեղեկություններ կան բարձրաստիճան հայ հոգևորականների հարուցած տարբեր հարցերի քննման ժամանակ դիվանբեկիի ունեցած մասնակցության վերաբերյալ։

Առաքել պատմիչի հաղորդմամբ, կաթողիկոսական իշխանության հաստատման վերաբերյալ երկրորդ ռաղամի համար Շահ Արաս Ա-ն Սահակ կաթողիկոսին ուղարկում է դիվանբեկիի մոտ[47]։

Այս փաստն ինքնին հետաքրքիր է և վկայում է, որ կրկնակի ռաղամի անհրաժեշտության դեպքում կաթողիկոսական իշխանության հաստատման գործը, որի իրավասուն շահն էր, հանձնվում էր դիվանբեկիին։ «Իսկ դիւան բէկին վասն թամահի խստությամբ էր պատասխանեալ Սահակայ, մինչ որ թամահն իւր լցեալ էր և

---

44 میینورسکی، سازمان اداری... ص ۹۲–۹۳

45 Դավրիժեցի, էջ 475—476։ Նման դատավարությունները (քրեական մեծ հանցանքների, այդ թվում մարդասպանության դեպքում) կատարվում էին ուրֆի (սովորութային) օրենքներով։

46 Նույն տեղում, էջ 473—474։

47 Առաջին անգամ շահից ստացած ռաղամը կնքել տալու նպատակով Սահակ կաթողիկոսն այն հանձնել էր կնքապահ Թահմազդուլի խանին, որը հանգամանքների բերումով մեկնել էր Երևան, իսկ Սահակը գերադասել էր շահից խնդրել նոր ռաղամ, ասելով որ նախկինը կորցրել է։

ապա գրեալ էր նոր բաղամ, բայց ոչ էր կնքեալ...»[48]։ Կրկին ռաղամը կնքելու համար Սահակ կաթողիկոսը մեծ դժվարություններ է կրում, ամենուրեք հանդիպելով կաշառակերության[49]։ Այս ե ուրիշ տվյալներ վկայում են Սեֆյան արքունիքում տիրող քաշքշուկի և կաշառակերության մասին։

Դավրիժեցին հաղորդում է նաև Իրանում օտարերկրացիների դատական գործի քննության փաստեր։ Ուշադրության արժանի է 1610 թ. եվրոպացի միսիոներների (Գլելուն և Արքանջելի) գաղը կապված՝ ս. Հռիփսիմեի մասունքների հափշտակման հետ։ Ֆրանկ պատրիկների այս դատավարության ժամանակ գլխավոր քննող և վճիռ կայացնող անձն արդեն դիվանբեկին չէ, այլ ինքը շահը (Արաս Ա-ն)։ Ըստ որում, շահն առաջնորդվում է ոչ թե շարի՛ կամ ուրֆի օրենքներով, որոնցով ղեկավարվում էին հոգևոր կամ քաղաքացիական դատարաններում, այլ զուտ քաղաքական ու դիվանագիտական նկատառումներով, ջանալով իր վճռով առիթ չտալ Իրանի լավ հարաբերությունների խաթարմանը ինչպես Եվրոպայի, որի ներկայացուցիչներն էին հիշյալ միսիոներները, այնպես էլ հայ խոջայության ու բարձր հոգևորականության հետ, որոնք խիստ վրդովված էին կատարված չարագործության առթիվ[51]։

Այսպիսով, շահ Աբաս Ա-ի օրոք նկատելի է օտարերկրացիների հետ կապված դատական հարցերում դիվանբեկիի իրավասությունների սահմանափակում։

«Պատմության» մեջ տեղեկություններ են հաղորդվում նաև ոստիկանապետի (դարուղայ[52]), կնքապահի (մոհրդար), դիվանա-

---

48 Դավրիժեցի, էջ 231։

49 Նույն տեղում։

50 Զաքարիա Աղուլեցին, որն իր եղբոր՝ Սիմոնի պարտատերերի դրդմամբ պատասխանատվության էր կանչվել շահի և դիվանբեկիի կողմից (1671 թ.), գործի վախճանն այսպես է արձանագրել. «Ես Զաքարիայ մին քանի թուման խարջեցի, պրծայ» (Զ. Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 104), հմմտ. Ղազարիա Սարկավագ. Պատմագրություն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 71—74։

51 Գոյություն ունի Շահ Աբաս Ա-ի ռաղամը Ամիրդուլեթ խանին՝ ի պատասխան Դավիթ կաթողիկոսին, գողացված մասունքները պատրիկներից վերցնելու և էջմիածնին հանձնելու, ինչպես նաև վերջիններիս պատժելու վերաբերյալ (տե՛ս Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 210, հմմտ. ՄՀՊ, պր. 2, վ. 10)։

Դավրիժեցու հաղորդմամբ «քանզի ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութեան ուխտեալ և հաստատեալ էին շահն և թագաւորն Ֆռանկաց ընդ միմեանս», շահը պատրիկներին պատժելու փոխարեն ազատ արձակեց, իսկ մասունքը վերադարձրեց հայերին (Դավրիժեցի, էջ 191—192)։

52 Ոստիկանապետի իրավասությունների մեջ էր մտնում հանցագործությունների կանխումը, ինչպես նաև մասնակցությունը հարկերի իրացման գործին (طاهر وحيد، عباسنامه، ص. ۳۳۱)

եան մատյանների վերակացուի և այլ պաշտոնների վերաբերյալ, որոնք հիմնականում հավաստում են այլ աղբյուրների տվյալները։

«Թազքիրաթ-ուլ-մուլուքում» հիշատակվում է ռաղամնևիսի, որը «դիվանի կառավարման գործերի վերաբերյալ շահի ֆարմանների հետ գործ ուներ» և հոքմնևիսի մասին, որը «տնօրինում էր հաստատված և կնքման ենթակա փաստաթղթերը»[53]։ Հավանաբար սրանցից մեկին կամ ավելի շուտ՝ երկրորդին է վերաբերում Դավրիժեցու տեղեկությունն արքունի գրապահի մասին. «...Իշխան ոմն՝ որ էր գրապան թագաւորական գրեանց, զի ամենայն գրեանք թագաւորին նմա հանձնեալ է, զի պահեսցէ...»[54]։ Գրապահը, Դավրիժեցու հաղորդմամբ, արքունի առաջատար պաշտոնյաներից էր, որի հետ հաշվի էին նստում պալատում։

Քաղաքների կառավարումն իրականացվում էր քաղաքապետների կամ քալանթարների միջոցով, որոնք ակտիվ մասնակցություն էին ունենում քաղաքային կյանքի բոլոր հարցերի լուծմանը, սերտ կապի մեջ լինելով վարչական այլ մարմինների, ինչպես նաև շահի հետ։

Սպահանի քաղաքապետ Միրզա Մոհամմեդի վերաբերյալ Դավրիժեցու տվյալները ցույց են տալիս նաև, որ մայրաքաղաքի քալանթարը իրավասու էր որոշ հարցերում փոխարինել շահին՝ նրա բացակայության դեպքում[55]։

Քալանթարին իրավունք էր վերապահվում հարկ եղած գնդքում զինված ջոկատների կամ առանձին զինվորների միջոցով կարգավորել այս կամ այն հարցը[56]։

Մեր պատմիչի հաղորդմամբ Լալա բեկը «ի թագաւորէն քաղաքապետ կարգեալ էր Սպահանու»[57]։ Մեկ այլ առիթով նա գրում է, որ Շահ Աբաս Բ-ն, անսլաով Երևանի քաղաքապետ Սոհամմեդ-ղուլի խանի հանդիպ մի քանի մեծամեծ իշխանների բողոքներին[58], «ընկեց զնա յիշխանութենէն... և զայլ ոմն ի թագաւորական ծառայից առաքեաց յԵրևան իշխող...»[59]։ Նման փաստերը

---

53 مینورسکی، سازمان اداری... ص ۱۱۸

54 Դավրիժեցի, էջ 445։

55 Նույն տեղում, էջ 186—187։ Նկատելի է, որ այս պաշտոնի մասին խոսելիս Դավրիժեցին գործածում է՝ «քաղաքապետ», «իշխող քաղաքին», «իշխան քաղաքին», սակայն ոչ «քալանթար» տերմինը. թերևս XVII դ. առաջին կեսին այս տերմինը լայն գործածություն չի ունեցել Հայաստանում։

56 Դավրիժեցի, էջ 186—187, 281։

57 Նույն տեղում, էջ 301։

58 Նույն տեղում, էջ 341։

59 Նույն տեղում։

վկայում են, որ քաղաքապետին նշանակում և պաշտոնանկ էր անում շահը։

«Պատմության» մեջ հիշատակվում են Սեֆևիների շրջանում տարբեր քաղաքների քալանթարների անուններ, որոնք լրացնում են այլ աղբյուրների տվյալները։ Դավրիժեցու հաղորդմամբ Շահ Աբաս Ա-ի օրոք Սպահանում քաղաքապետ էր Միրզա Մոհամմեդը, ապա՝ Լալա բեկը, Թավրիզում՝ Ղառչղա խանը, Երևանում Թահմազ զուլի խանը, ապա՝ Մոհամմեդ զուլի խանը, որին հաջորդել է Նաջաֆ զուլի խանը և այլն։

Մենք խոսեցինք Սեֆևիների վարչական այն պաշտոնների շուրջը, որոնց մասին տեղեկացնում է Դավրիժեցին։ Նշենք, որ պատմիչի տեղեկություններն ընդհանուր գծերով պատկերում են նաև Սեֆևիների վարչակարգին բնորոշ մի շարք կողմերը։ Մի կողմից սերտ կապ և համաձայնեցվածություն բարձր աստիճանավորների, «պետության սյուների» միջև՝ մասնավորապես ժողովրդական դանդվածների կամ նրանց առանձին ներկայացուցիչների հնարկսպված հարցերի լուծման ժամանակ, մյուս կողմից՝ տարաձայնություններ, կենտրոնախույս ձգտումներ, պալատական գավեր, պաշտոնների վաճառք։ Զգալի էր կաշառակերությունը, որը հնարավոր արտակարգ չափերի է հասել։ «Բազում ուկի և արծաթ» տալը նպատակին հասնելու կարևոր միջոց էր։ Դրա պաշտոնական կամ բացահայտ արտահայտությունն էր փիշքաշը[61] (پیشکش), որ անխուսափելի պարտադիր էր որևէ հարցի լուծման ճանապարհին և ընդունում էին վարչական բոլոր մարմինները, ընդհուպ մինչև շահը։ Դավրիժեցու հաղորդմամբ Փիլիպոս կաթողիկոսը Լուսավորչի Աջը Նոր Ջուղայից էջմիածին տեղափոխելու թույլտվություն ստացավ միայն այն բանից հետո, երբ «սկսաւ շրջել ի դրունս իշխանաց թագաւորին, և առատաձեռն տրօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց։ Եւ ասէր յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկուտեղ՝ և ընդ նմին գրեալ թուղթ արդարի՝ մատոյց առաջի Շահսէֆի արքայի...»[62]։ Կաթողիկոսական իշխանության հաստատման համար «Սահակն ընծայ ինչ ըստ կարողութեան իւրոյ մատուցեալ էր

---

60 Առանձին դեպքերում քաղաքի բնակիչներին իրավունք էր վերապահվում իրենց հայեցողությամբ քալանթար ընտրել։ Տե՛ս Զամարիա Ազուլեցի, Օրագրություն, էջ 139։

61 Գոյություն ուներ և հատուկ հարկ՝ փիշքաշ, որ պարտավոր էր տալ ռայաթը ֆեոդային՝ վերջինիս ծննդյան, ամուսնության և այլ հանդիսավոր օրերի, ինչպես նաև տոների կապակցությամբ։

62 Դավրիժեցի, էջ 320։

առաջի արքայի, ընդ որս էր և ձի մի պատուական»[63]։ Փիշքաշը նույնիսկ գանձարանը հարստացնող միջոցներից մեկն էր[64]։

Իրանի քաղաքական ու տնտեսական ամրապնդման ուղղությամբ կատարելով մի շարք ռեֆորմներ, Շահ Աբաս Ա-ն գործնական քայլեր կատարեց նաև մետաքսի առևտրի՝ Թուրքիայով անցնող քարավանային ճանապարհը տեղափոխելու հարավ, այլ խոսքով՝ օգտագործելու Եվրոպան Ասիայի հետ կապող ծովային ճանապարհը, որը հայտնագործված լինելով XV դ. վերջերին, մեկ դար հետո գործարար նշանակություն էր ձեռք բերել։

Եվրոպա-ասիական առևտրական ծովային նոր ճանապարհը մեծ չափով ձեռնտու էր քարավանային ճանապարհի համեմատությամբ և անհրաժեշտ էր Իրանի համար նախ և առաջ որպես մետաքսի արտահանման շահավետ ուղի։ Մասնավորապես Թուրքիան մեծ մաքս էր պահանջում փոխադրվող մետաքսի համար։ Բացի դրանից, Թուրքիայով անցնող առևտրական տարանցիկ ճանապարհները հեռու էին անվտանգ լինելուց. մի հանգամանք, որ իրեն զգացնել է տվել շարունակ։ Դավրիժեցու հաղորդմամբ Վանով անցնող Թավրիզի քարավանները երկար ժամանակ հարձակման էին ենթարկվում Խոշաբա բերդի իշխան Սուլեյման բեկի կողմից, որը «զկարաւանաց բեռինսն բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հաւանէր, սուղ ինչ գին ձգէր ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն և պատճառէր թէ գնով գնեցի»[65]։ Փաշայությունից ղրկված Զոմարը իր շուրջը հավաքելով ավազակներ, «դարանամուտ լինէր ի վերայ ճանապարհաց՝ երթևեկ կարաւանաց և ի վերայ բախեալ զորս կոտորէր և զորս փախստական առնէր, և զոսկի և զարծաթ և այլ զոր ինչ կամէր առեալ գնայր... այնքան մինչև զի երկթևեկութիւն ճանապարհաց խափանեցաւ...»[66]։

Մետաքսի արտահանման նոր ճանապարհը ոչ միայն հարվածում էր Իրանի ախոյանի՝ Թուրքիայի ֆինանսներին, այլև ազատում էր Իրանին հիշյալ խոչընդոտներից։

---

63 Նույն տեղում, էջ 230, տե՛ս նաև էջ 309, 311 և այլն։

64 Այս հանգամանքն ընդգծում է և Շարդենը. տե՛ս سیاحنامه شاردن، ترجمه محمد کباسی تهران، ج ۳ ص ۲٦۷

65 Դավրիժեցի, էջ 494։

66 Նույն տեղում, էջ 496, հմմտ. Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, էջ 35, 45, 71—72 և այլն, Զաքարիա Սարկավագ, Պատմագրություն, հ. Բ, էջ 24։

Առևտրի զարգացման գործին խթանելու, ինչպես նաև՝ Թուրքիայի դեմ պատերազմներում եվրոպական երկրների աջակցությունն ստանալու համար Շահ Արաս Ա-ն լայն արտոնություններ է շնորհում եվրոպացի վաճառականներին[67]։ Անգլիական և հոլանդական Արևելյան-Հնդկական ընկերություններն իրավունք են ստանում իրենց առևտրական ֆակտորիաներն ունենալու Իրանում։ Իրան ժամանած անգլիացի, հոլանդացի, ֆրանսիացի բազմաթիվ առևտրականների, ինչպես նաև կաթոլիկ միսիոներների գործունեությունը հող է նախապատրաստում գաղութային ներթափանցման և Իրանում կապիտուլացիոն ռեժիմի ստեղծման համար, որին ձգտում էին եվրոպական երկրները։ XVII դ. սկզբին նրանց ջանքերը՝ իրենց ձեռքը վերցնելու մետաքսի արտահանումը, հաջողությամբ չի պսակվում։

Շահի մենաշնորհը հանդիսացող մետաքսի առևտուրը կատարվում էր գլխավորապես հայ վաճառականների միջոցով[68]։ Հանձինս ջուղայեցի առևտրականների, որոնք գաղթեցվել էին Իրան, վերջինս ուներ ձեռներեց և հավատարիմ առևտրական գործակալներ, որոնք աշխարհի տարբեր երկրների հետ առևտրական սերտ կապերի մեջ էին։

Հետևաբար Շահ Արաս Ա-ի պլաններն իրականանում են, և Ջուղայի առևտրական կապիտալը կոված է ծառայում Իրանի առևտրի համար։ Այդ է պատճառը, որ Ջուղայի վաճառականները, հայ խոշորները ոչ միայն օգտվել են լայն իրավունքներից ու արտոնություններից, այլև եղել են Սեֆյան շահերի և հատկապես Շահ Արաս Ա-ի մերձավորները՝ հաճախ՝ խորհրդատուներ։ Այդ մասին Դավրիժեցու երկն ամփոփում է բազմաթիվ փաստեր։ Իրանում հայ վաճառականների խաղացած ակնառու դերը համընդհանուր ճանաչում է գտել և արձանագրվել ժամանակակիցների կողմից։ «Ամենաշատ և ամենահարուստ վաճառականները Պարս-

---

67 Տե՛ս ایران... ص ۱۰۳ Անշուշտ սխալվում է Մոհամմեդ Փարանդը, XVII դ. սկզբին Իրանի ու եվրոպական երկրների առևտրական հարաբերությունների աշխուժացման հիմքում դնելով Շահ Արասի սիրալիր վերաբերմունքն այդ երկրների ներկայացուցիչների նկատմամբ, անտեսելով յուրաքանչյուր կողմի հետապնդած տնտեսական ու քաղաքական նպատակները)։ عباس پرنگ شاه محمد کبیر تهران، ۱۹۵۲، ص ۳۲۴

68 Տավերնյեի հաղորդմամբ Շահ Արաս Ա-ն մետաքսի առևտուրն սկզբում հանձնարարել է իրանցի վաճառականներին, որոնք, սակայն, վատնել են վաճառքից ստացած դումարը, և շահը համոզվելով, որ իրանցիներն այդ գործում ապաշնորհ են, մետաքսի առևտուրը վստահել է հայ վաճառականներին (سفرنامه تاورنیه، تهران، ترجمه ابو تراب نوری، ۱۳۳۱، ص ۶۲۳)

կաստանում,—գրում է Ադամ Օլեարիուսը,—հայ քրիստոնյաներն են, որոնք ամենուր երթևեկում են՝ երկրում և նրանից դուրս»[70]։

Խոսելով Կոստանդնուպոլիս ժամանած հայ վաճառականների մասին, Դավրիժեցին շեշտում է մասնավորապես ջուղայեցիներին և դողթնեցիներին (հավանաբար նկատի ունի ագուլեցիներին)[71]։ Վերջիններիս մասին առատ տվյալներ է պարունակում Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, որը հարուստ աղբյուր է Սեֆյան Իրանի առևտրական հարաբերությունների վերաբերյալ և արժեքավոր տվյալներ է ընդգրկում XVI—XVII դդ. հայ վաճառականների, նրանց առևտրական գործարքների, ապրանքների գների, առևտրի հիմնական երթուղիների մասին և այլն։ Հայ վաճառականները հաճախ էին լինում Ստամբուլում, Իզմիրում, Էրզրումում, Բուրսայում, որտեղի վաճառականների հետ առևտրական սերտ կապեր ունեին[72]։ Դավրիժեցին պատմում է հայ մեծահարուստ վաճառական Անտոն Զալապու մասին, որը հիշյալ քաղաքներում գնում էր Իրանից եկած հայ վաճառականների, հաճախ մի ամբողջ քարավանի ապրանքը[73]։

Մետաքսից բացի (հումք և պատրաստի) Իրանից արտահանվում էր կերպաս, թավիշ ու այլ կտորեղեն, գորգեր, սեկ (սաֆյան), բուրդ, ծխախոտ, շոր միրգ և այլն։ Եվրոպացիներն Իրան էին բերում ձիթապտուղ, պղինձ, շաքար, տարբեր տեսակի մահուզ։

Աշխույժ էր և թանկարժեք քարերի առևտուրը, որով զբաղվում էին գլխավորապես հրեաները[74]։ «Պատմությանն» մեջ ընդարձակ տեղեկություններ կան թանկարժեք քարերի, նրանց հատկությունների, արտահանման ու վաճառքի վայրերի և նրանց գների վերաբերյալ[75]։

Իրանն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել նաև Ռուսաստանի հետ։ Դավրիժեցու հավաստմամբ, Շահ Աբաս Ա-ի օրոք Սեֆևիները Ռուսաստանի հետ դեսպանություններ էին փոխանակում. «Եւ եղև զի... եկին դեսպան ի Ռուսաց թագաւորէն վասն սիրոյ և բաղում գործոց»,—գրում է

---

[70] *Олеарий Адам*, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633. 1636 и 1639 годах, М., 1870, стр. 791.

[71] Դավրիժեցի, էջ 287։

[72] Նույն տեղում, հմմտ. Զ. Ագուլեցի. Օրագրություն, էջ 41, 59, 160 և այլն։

[73] Դավրիժեցի, էջ 338—339։

[74] Նույն տեղում, էջ 479, հմմտ. احمد تاجبخش، تاریخ روابط ایران و روسیه، در نیمه اول قرن نوزدهم، تبریز، ۱۳۳۷، ص ۸

[75] Նույն տեղում, էջ 588—605։

Դավրիժեցին, այնուհետև պատմելով Շահ Աբաս Ա-ի հետ նրանց հանդիպման մասին՝ «Պատմության» մեջ նման փաստեր ենք տեսնում և Աբաս Ա-ի հաջորդի՝ շահ Սեֆու (1642—1666) շրջանի վերաբերյալ. «Եւ եղեւ զի թագաւորն Ռուսաց սիրոյ աղագաւ հրէշտակ խաղաղութեան առաքեաց առ Շահսեֆի Պարսից թագաւորն...»[76]։ Դեսպանությունն Իրանի արքունիք էր բերել բազմաթիվ ընծաներ, որոնց թվում և՝ ավանդական բազե[77]։ Անշուշտ այդ բարեկամական այցելությունների ժամանակ առևտրի հարցը գրավում էր կարևոր տեղերից մեկը։ Դեռևս 1604 թ. Ռուսաստանն իրավունք է ձեռք բերում Իրանում առևտուր անել առանց մաքսի[78]։ Ռուսական ապրանքները, մասնավորապես մորթեղենը, լայն ընդունելություն էին գտնում Իրանում, հաճախ տեղ գտնում պարսից շահերի կողմից այլ երկրների թագավորներին մատուցվող ընծաների մեջ[79]։ Իրենց հերթին, Իրանից ներմուծվող ապրանքները գոհունակությամբ էին ընդունվում Ռուսաստանում, որտեղ ընդհանրապես Իրանից եկող վաճառականների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք էր ցույց տրվում[80]։

Իրանի ներքին առևտուրը ևս XVII դ. սկզբից զարգացում է ապրում։ Երկրում միջոցներ են ձեռնարկվում առևտրական ճանապարհների անվտանգությունն ապահովելու, նոր ճանապարհներ անցկացնելու և հներին նորոգելու ուղղությամբ, կառուցվում են կամուրջներ և մեծ քանակությամբ քարավանատներ։

Ներքին շուկայում վաճառքի էր հանվում երկրի արհեստագործական արտադրանքը (կտորեղեն, կաշվե իրեր, գորգեր և այլն), որը հաճախ նաև արտահանվում էր Իրանից դուրս։

XVII դ. սկզբին ներքին առևտրի և արհեստների զարգացումը հատկանշական էր Իրանի քաղաքների համար։

Դավրիժեցին հիշատակում է Իրանի շատ քաղաքների՝ Սպահանի, Թավրիզի, Արդաբիլի, Ղազվինի, Շիրազի, Լառի, Համադանի, Եզդի, Քերմանի, Քաշանի, Ղոմի մասին։

---

[76] Դավրիժեցի. էջ 140—141։

[77] Նույն տեղում, էջ 411։

[78] Նույն տեղում, հմմտ. اسکندر منشی... ج ۲، ص ۹۴۰

[79] *П. Рутух*, Политико-статистический очерк Персии, СПб., 1896, стр. 210.

[80] *Տե՛ս* اسکندر منشی... ج ۲، ص ۹۵۱

[81] Վ. Ոսկանյան, *Հայ-ռուսական հարաբերությունները XVII դ. (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1948, № 1)։*

Առավել մանրամասն տեղեկություններ է տալիս Դավրիժեցին մայրաքաղաքի՝ Սպահանի[82] վերաբերյալ։ Պատմագրի վկայակոչած հիշատակարանի (գրված 1461 թ.) հաղորդմամբ, XV դ. կեսերին Սպահանը «ամուր և բազմամարդ» բալց և «հողաշեն» քաղաք էր[83]։ XVII դարում Սեֆևիների մայրաքաղաքը լինելով (1598 թ.), Սպահանն աննախընթաց ծաղկում է ապրում և դառնում ժամանակի աչքի ընկնող քաղաքներից մեկը։ Ոմանք նույնիսկ այն համարել են Ասիայի լավագույն քաղաքը[84]։ Սպահանը, որը հորջորջվել է «աշխարհի կես» մակդիրով, բազմամարդ է եղել[85] և գրավել ավելի քան 37 կմ պարագծով տերիտորիա[86]։

Նկարագրելով քաղաքի դիրքը, պատմիչը նշում է, որ այն արևմուտքից արևելք հատվում է մեծ գետով (Զայենդեռուդ), որի հյուսիսային կողմում տեղավորված են շահի պալատը, մահմեդականների տները, վաճառանոցները և այլն, իսկ հարավային կողմում ջուղայեցիներն են[87]. 1655—1656 և 1659 թթ. հայերը, հրեաները, դեբրերը, որոնք բնակվում էին գետի հյուսիսային կողմում, վերաբնակեցվում են նրա մյուս ափը[88]։

Սպահանի բարեկարգման ու բարգավաճման ուղղությամբ առանձնապես մեծ ջանքեր է գործադրել Շահ Աբաս Ա-ն, որի օրոք քաղաքն առանձին շուք է ստանում և ընդարձակվում, մեծ հռչակ է ձեռք բերում, «որոշ ժամանակ դառնում Արևելքի առևտրի կենտրոն»[89]։ Ականատեսները XVII դ. Սպահանի մասին միայն հիացական խոսքեր են թողել։ Դավրիժեցին այն անվանում է «մեծահանդես» քաղաք։ Ջուղայեցու արտահայտությամբ՝ Սպահանը «ի ձեռս առաչնոյ Շահաբասին յոյժ հրաշալի յօրինուածովք և վա-

---

82 Սպահանն անվանվել է նաև Շոշ կամ Սոս։

83 Դավրիժեցի, էջ 420։

84 Տե՛ս В. Бартольд, Место Прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1926, стр. 758.

85 Ըստ Բեկ Բայաթ Օրուջի, XVII դ. Սպահանի բնակչությունը կազմել է 80 հազար ընտանիք (بيك بيات اوروج، دون زوان ايرانى، تهران ۱۳۳۸ ص ۵۹) Ընդունված է, որ սպահանաբնակների թիվը եղել է ավելի քան 500 հազար։

86 Անհավանական են այս հարցում Արոլ Ղասսմ Սահաբի տվյալները, ըստ որոնց Սպահանն արևմուտքից արևելք ձգվել է 60 ֆարսանգ (տե՛ս سحاب ابوالقاسم، تاريخ رندگانى شاه عباس كبير، تهران، ۱۳۳۵، ص ۱۷۱) (ֆարսանգը կամ ֆարսախը հավասար է 6—8 կմ)։

87 Դավրիժեցի, էջ 452—453։

88 Այդ փաստի նկարագրությանը Դավրիժեցին մի ամբողջ գլուխ է նվիրել (տե՛ս գլ. ԼԳ., էջ 442—455), նաև՝ էջ 457—461, հմմտ. Հ. Տեր-Հովհաննեսյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 84—86։

89 احمد تاج بخشى، ايران... ص ۵۲—۵۳

ելլ.ագարդ տեսությամբ յաւետ շքեղագունս պայծառացաւ, ըստ որում և յայտ ի տեսողաց այժմ իսկ է»[90]։

Շահ Աբաս Ա-ի նախաձեռնությամբ Սպահանը զարդարվեց Հարտարապետական այնպիսի կոթողներով, ինչպիսիք են Ալի-Ղափուն և Չեհելսոթունը (ապարանքներ)[91], Մասջադ-Շահը և Մասջադ-Լոթֆոլլան (մզկիթներ), Ալլահվերդի խանի և Խաջուի կամուրջները և այլն։ Ստեղծվեցին հրապարակներ, շուկաներ, այգիներ և այլն։

Սպահանի շինարարության ու բարեկարգման գործում մեծ չափով մասնակցություն են ունեցել նաև նոր Ջուղան կառուցող հայերը, որոնք հաստատվելով Սպահանում, «շինեցին յարկս և ընակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք... բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք...»[92]։

Քաղաքը սակավաջուր է եղել։ Այդ ուղղությամբ Շահ Աբաս Ա-ի ձեռնարկած միջոցառումներից էր Աբիքուրան գետի[93] հունը փոխելու և այն Զայենդեռուդին միացնելու փորձը, որի նպատակն էր մայրաքաղաքն ապահովել ջրով[94]։ Սակայն այս դժվարին գործը, որի առաջին փորձը կատարել էր ջահ Թահմասպը, տեղանքի աննրպաստ պայմանների պատճառով կրկին անհաջող վախճան է ունենում[95]։

Սպահանը, ինչպես ողջ Իրանը բազմազգ է եղել։ Ֆ. Կոտովը նշում է սպահանաբնակ հայերին, հրեաներին, ադրբեջանցիներին, արաբներին, հնդիկներին[96]։ Զաքարիա Սարկավագի հաղորդմամբ Սպահանում ապրում էին նաև հույներ, ասորիներ, վրացիներ, ուզբեկներ, քրդեր, ինչպես նաև իրանական զանազան ցեղեր[97]։

---

[90] Խ. Ջուղայեցի. Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 98։

[91] Էբրահիմ Դեհղանը դրանց կառուցումը սխալմամբ վերագրում է Աբաս Բ-ին (طاهر وحيد، عباسنامه، ص ی)

[92] Դավրիժեցի, էջ 63, 454։

[93] Արև-Քուհրանգ (آب دوهرنك) (լեռնագույն ջուր) կամ Արե-Քուրանդ (آب كورنك), այժմ՝ Քարուն։

[94] Դավրիժեցի, էջ 140—141։

[95] ۹۴۹-۹۵۰ص ۲ ...منتشر استخدر Խ. Ջուղայեցի, Պատմություն Պարսից, էջ 128—129։ Աբ-ի Քուրան ջրանցքի ու համանուն հարկի մասին տե՛ս Թ. Ավդալբեկյանի հոդվածը. («Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 457—461)։

[96] Хождение купца Ф. Котова в Персию, М., 1958, стр. 82, 91.

[97] Զ. Սարկավագ, Պատմագրություն, հ. 1, էջ 56, հմմտ. Ջուղայեցի, Պատմություն Պարսից, էջ 137։

Դավրիժեցին հիշատակում է «ֆրանկների» մասին, այդպես անվանելով բոլոր եվրոպացիներին։ Պատմագրի տվյալները վկայում են վերջիններիս վայելած լայն արտոնությունների, մասնավորապես կրոնական ազատության մասին[98]։

Իրանի քաղաքներում այդ շրջանում լայն թափ է ստանում արհեստների զարգացումը։ Գոյություն ունեին մեծ թվով արհեստանոցներ՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կամ շահին պատկանող, որոնք կոչվում էին «քարխանե»։ Դավրիժեցու տեղեկությունները վկայում են, որ հմուտ արհեստավորներն առանձնապես վայելում էին իշխանության հովանավորությունը[99]։

Այսպիսին է Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ Դավրիժեցու տված տեղեկությունների պատկերը։ Թեև պատմագիրն առանձին չի անդրադարձել պատմության այդ կողմին, սակայն, նրա տվյալները կարող են օգտակար լրացում լինել Իրանի պատմության ուսումնասիրման համար։

Л. Г. ДАНЕГЯН

ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ ИРАНА В «ИСТОРИИ» АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ

Резюме

Труд армянского историографа XVII в. Аракела Даврижеци является достоверным источником для изучения истории Ирана.

Статья посвящена анализу данных Даврижеци о социально-экономической жизни Ирана, в частности—об аграрных отношениях, положении крестьян, налогах, сефевидской администрации, о торговле, ремеслах, городах и т. п.

Особенно ценны сведения Даврижеци о своеобразных формах земельных пожалований, таких налогах и повинностях, как чобанбеки, джизья, гоналга, сурсат и т. п.— и методах их взимания, о злоупотреблениях и произволе в налоговой системе. Интерес представляют данные «Истории», свидетельствующие и о политико-экономических отношениях между Сефевидским Ираном и Россией, об обстановке при шахском дворе, компетенции различных должностных лиц, как—э'темад-эд-доуле, садр, диванбеки, даруга, калантар, хокмневис и т. п.

---

[98] Միայն Սպահանում նրանք ունեին երեք վանք. սրանցից մեկը Հուսինյան անունն էր կրում (Դավրիժեցի, էջ 154, 185)։

[99] Նույն տեղում, էջ 301։

Все эти сведения отражают две основные тенденции жизни Сефевидского Ирана: с одной стороны укрепление всего того, что составляет «столпы государства», с другой— разногласия, центробежные тенденции, дворцовые интриги, продажа должностей, волокита, взяточничество.

В статье данные Даврижеци рассматриваются в сопоставлении их с данными других источников.